Դոկտոր Մայքլ Քամբեք
Գլխավոր քարտուղար
Հեռ.՝ +32 484 75 28 25
Էլ. փոստ՝ michael.kambeck@eufoa.org

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրյուսել, դեկտեմբերի 11, 2013թ.

Եվրամիությունը Հայաստանին մուտք է շնորհում դեպի իր գերատեսչություններ եւ ծրագրեր

Այսօր՝ դեկտեմբերի 11-ին, Եվրախորհրդարանը տվեց իր համաձայնությունը Հայաստանի Հանրապետության մասնակցությանը ԵՄ գերատեսչություններին եւ ծրագրերին՝ ընդունելով այդ մասին Եվրախորհրդարանի պատգամավոր Թոմաշ Պորեբայի հեղինակած զեկույցը, որը հանդիսանում է առաջին շոշափելի համագործակցության քայլը վերջերս Վիլնյուսի գագաթնաժողովում ընդունված ԵՄ-Հայաստան հռչակագրից հետո:

Մասնավորապես Հայաստանը հնարավորություն կունենա մասնակցելու ԵՄ համաշխարհային առաջատար ծրագրերին մշակույթի, կրթության, շրջակա միջավայրի եւ գիտության բնագավառներում: Հայաստանցի քաղծառայողները կինտեգրվեն ԵՄ այնպիսի գերատեսչություններ, ինչպիսիք են ավիացիոն անվտանգությանը, բժշկությանը եւ շրջակա միջավայրինը, ինչպես նաեւ բոլոր այլ մակարդակներում:

«Վիլնյուսի գագաթնաժողովի մասնակիցները քննարկվել են ԵՄ-Հայաստան համագործակցությանը նպաստելու եւ այն ձեւավորելու լավագույն ձեւերը՝ միաժամանակ հարգելով Հայաստանի կոմպլեմենտար արտաքին քաղաքականությունը եւ ինտեգրումը Մաքսային միություն: Հայաստանին ԵՄ գերատեսչությունների եւ ծրագրերի մուտք շնորհելը, ինչն առայսօր վերապահված էր մեծամասամբ Եվրամիության անդամ երկրներին, շատ կոնկրետ քայլ է ճիշտ ուղղությամբ եւ Հայաստանին թույլ կտա երկրի արդիականացման համար կենսական նշանակություն ունեցող ֆինանսական եւ վարչական օգուտներ քաղել: Կարծում եմ՝ սա ավելի քան հուսադրող ազդանշան է երկու կողմերից՝ շարունակելու առաջ շարժվել կոնկրետ ժամկետներում՝ օգուտ ապահովելով բոլոր ներգրավվածների համար», - մեկնաբանում է ՀԵԲ-ի գլխավոր քարտուղար Մայքլ Քամբեքը:

Եվրախորհրդարանի զեկույցն ընդգծում է, որ Հայաստանի Հանրապետությունն է խնդրել մուտք դեպի ԵՄ ծրագրեր եւ գերատեսչություններ, եւ որ իր այս նախաձեռնությամբ Եվրամիությունը նպատակ ունի խթանել պետության արդիականացումը:

Վիլնյուսի հռչակագրին համահունչ՝ զեկույցը հստակ սահմանում է, որ «... *դա թույլ կտա Միության որոշակի ծրագրերի աստիճանական բացումը կամ ուժեղացված մասնակցություն Հայաստանի համար՝ առաջարկելով մշակութային, կրթական, բնապահպանական, տեխնիկական եւ գիտական կապերի հետագա խթանմանն ուղղված հնարավորություն, ընդլայնելով մարդկանց միջեւ շփումները եւ ոլորտային համագործակցությունը, ի լրումն այդ ամենի ամրապնդելով քաղաքականը եւ հարաբերությունները Արեւելյան գործընկերության միջոցով ...* »

Հայաստանի Հանրապետությունը յուրահատուկ իրավիճակում է՝ քաղելու համար առավելագույնը ԵՄ-ի հետ սկսվող այս նոր փուլից, քանի որ Վերածնունդ միջազգային հիմնադրամի՝ ԱլԳ երկրների ինտեգրմանը վերաբերող վերջին ցուցանիշի համաձայն՝ Հայաստանն արդեն երկրորդ լավագույն դիրքում է շահելու համար ԵՄ ծրագրերին եւ գերատեսչություններին իր մասնակցությունից:

Տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետությունը կարող է, մասնավորապես, միանալ ԵՄ այնպիսի ծրագրերի, ինչպիսիք են շրջակա միջավայրին եւ կլիմայի գործողություններին վերաբերող LIFE-ը, որն ունի 3.29մլրդ եվրոյի բյուջե 2014-2020թթ ժամանակահատվածի համար, գիտելիքին, նորարարությանը եւ կայուն զարգացմանն ուղղված HORIZON 2020-ը՝ 70.2 միլիարդ եվրո բյուջեով նույն ժամանակատվածի համար, կամ հայտնի ERASMUS PLUS-ը այլ ծրագրերի շարքում, քանի դեռ դրանց կանոնադրությունները եւ նպատակները թույլ կտան նման մասնակցություն, կկատարվի ֆինանսական ներդրում եւ կստորագրվի երկկողմ փոխըմբռնման հուշագիր:

Բացի այդ, հայ պաշտոնյաները կներգրավվեն այդ ծրագրերի կառավարման եւ ԵՄ գերատեսչությունների գործունեության մեջ, ինչպիսիք են Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալությունը (EASA), Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությունը (EAA), Եվրոպական դեղերի գործակալությունը (EMA) եւ այլն՝ այդպիսով ձեռք բերելով համաշխարհային առաջատար կառույցների փորձառությունն ու հմտությունները համապատասխան ոլորտներում, որոնք կարող են փոխանցվել դեպի իրենց ազգային կառավարում:

ՀԵԲ-ը ուրախ կլինի այս թեմայով մեկնաբանություններ կամ վերլուծություն տրամադրել անգլերեն, գերմաներեն, իսպաներեն, լեհերեն, ռուսերեն եւ հայերեն լեզուներով: Եվրոպա-Հայաստան խորհրդի անդամները նույնպես պատրաստ են մեկնաբանել այս թեման, հարցերի դեպքում կարող եք դիմել մեր քարտուղարությունն:
ՀԵԲ-ի եւ Եվրոպա-Հայաստան խորհրդի մասին ավելին իմանալու համար այցելեք մեր կայքը՝ www.EuFoA.am:
Բարձրորակ նկարներ կարող եք գտնել մեր կայքում կամ մեզ դիմելով: Կարող եք դրանք օգտագործել "Copyright: www.EuFoA.org" հղմամբ: